

Զշորս ամ ապրեալ՝
ի թիւ վաթսունի՝
Սլացաւ ի մէնջ՝

էառ սուրբ վախճան.
կենացն լրման,
ի սուրբ հարց կայան:

Յամի Տեառն 1817 յուլիսի 27:

ԺԴ.

ԴԱԻԻԹ ՊԱՏՐԻԱՐԳ ԷՆԷԳԷԹՅԻ

Յետոյ Էջմիածնի Կաթողիկոս. թաղուած է Էջմիածնի Ս. Գայիանէի վանքը.
ունի իր շիրմին վրայ հետեւեալ արձանագիրը.

Ահա դամբարանն և յարկ բնակութեան
Դաւիթ հօրն այն դիոյ հանգստեան.
Կաթողիկոսի շնորհիւ օծութեան.
Եւ հայրապետի զահիւս՝ սրբութեան.
Որոյ դադարեալ ի խոովութեան
Զկնի հրաժարման ի վեհութենէ,
Սիրով միշտ գգուեալ ի Պետէն մերմէ
Սրբազան տեառն մեծէն Եփրեմէ.
Հանգեաւ սա յամի Տեառն փրկչական
Հազար ութն հարիւր տասն և եօթ թուական
ի նոյեմբերի աւուր միական,
Մեծաշուք փառօք եղաւ յայս տապան:

ԺԵ.

ԱՐԲԱՀԱՄ ՊԱՏՐԻԱՐԳ ԳՈԼԵԱՆ ԿԱՄ ՕՐԲԵԼԵԱՆ

Թաղուած է Մարսուանի Զարիսփան Ս. Աստուածածնայ վանքին տաճարին
հիւսիսային որմին կողմը, Յովհաննէս պատրիարք Համատանցիի քով:

Ամփոփեալ պատուով աստ ննջէ ի քուն
Մելիքեան զարմէն Աբրահամ բարուն.
Սիւնեաց աշխարհէ սնունդ վեհազուն
Տաթևայ վանուց դիտապետ արթուն.
Արքեպիսկոպոս շնորհիւ սուրբ Հոգւոյն
Սուրբ Էջմիածնի Նուիրակ Ծայրագոյն.
Ընտրեալ Պատրիարք Կ. Պօլսոյն
Ապա առաջնորդ տեղւոյս գերագոյն.
Հանգիպեալ մահուան ամաց իբր յիսուն
Փոխեցաւ ի պարս երջանկաց դասուն.
Սուգ առեալ ողբաց համայն հայկազուն
Զի բարձաւ ազգէս տեսուչ խմաստուն:

յամի Տեառն 1819, փետրվարի 1